

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ԻՎԱՆՈՎԸ ԵՎ ԱՅԼՈՔ ԸՆԴԴԵՄՔՈՒՂԱՐԻԱՅԻ** գործով  
ՎՃԻՌ

Ստրասբուրգ, 24 նոյեմբերի 2006թ.

**Իվանովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), որպես Պալատ նիստ գումարելով հետևյալ կազմով.

*Նախագահ՝*

պրն C.L. ROZAKIS,

*Դատավորներ՝*

պրն P. LORENZEN,

տկն N. VAJIĆ,

տկն S. BOTOCHAROVA,

պրն A. KOVLER,

տկն E. STEINER,

պրն K. HAJIYEV,

և *Բաժանմունքի քարտուղար՝*

պրն S. NIELSEN,

գաղտնի խորհրդակցելով 2005թ. նոյեմբերի 3-ին,

կայացրեց հետևյալ վճիռը, որը հաստատվեց նույն օրը:

## **ՓԱՍՏԵՐ**

### **I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

9. Դիմողները ներկայանում են որպես ծագումով մակեդոնացիներ և Միացյալ մակեդոնական իլինդեն - ՊԻՐԻՆ կազմակերպության անդամներ (այսուհետ՝ ՄՄԿ Իլինդեն - ՊԻՐԻՆ):

## A. Տեղեկանք

10. Ըստ երևույթին, ՄՄԿ Իլինդեն - ՊԻՐԻՆ-ը սերտ առնչություն ունի Բուլղարիայի հարավ-արևմուտքում գործող Միացյալ մակեդոնական իլինդեն կազմակերպության հետ (այդ տարածքը հայտնի է որպես Պիրին Մակեդոնիայի աշխարհագրական տարածաշրջանի Պիրին տարածք), որն ամեն տարի Պիրին Մակեդոնիայի տարբեր վայրերում հիշատակի միջոցառումներ կազմակերպելու փորձ է անում: 1994-2003 թվականներին այդ հանրահավաքները, որոշ բացառություններով, պարբերաբար արգելվել էին իշխանությունների կողմից (տե՛ս *Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria*, թիվ 29221/95 և 29225/95, ECHR 2001-IX, և *The United Macedonian Organisation Ilinden and Ivanov v. Bulgaria*, թիվ 44079/98, 20 հոկտեմբերի 2005թ.): Բացի դրանից, 1990-91 և 1998-99 թվականներին մերժվել էր այդ միության գրանցումը (տե՛ս *The United Macedonian Organisation Ilinden and Others v. Bulgaria* (dec.), թիվ 59491/00, 9 սեպտեմբերի 2004թ.):

11. 2000թ. փետրվարի 29-ին ՄՄԿ Իլինդեն – ՊԻՐԻՆ-ը, որն այդ ժամանակ արդեն գրանցված էր որպես քաղաքական կուսակցություն, Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական էր ճանաչվել և արդյունքում լուծարվել (տե՛ս *The United Macedonian Organisation Ilinden – PIRIN and Others v. Bulgaria*, թիվ 59489/00, 20 հոկտեմբերի 2005թ.):

## B. 1998թ. օգոստոսի 10-ին ծրագրված հանրահավաքը

12. 1998թ. օգոստոսի 3-ին երկրորդ դիմողը, հանդես գալով ՄՄԿ Իլինդեն – ՊԻՐԻՆ-ի անդամների ու հետևորդների անունից, Սոֆիայի քաղաքապետին տեղեկացրել էր, որ

1998թ. օգոստոսի 10-ին՝ Բուխարեստյան համաձայնագրի<sup>1</sup> տարելիցի օրը, Ազգային թատրոնի դիմացի հանրային պուրակում ծրագրվում է հանրահավաք: Նախատեսվել էր, որ մասնակցելու է մոտ հարյուր մարդ: Դիմողը քաղաքապետին հավաստել էր, որ միջոցառման ընթացքում անկարգություններ չեն լինի:

13. Նույն օրը՝ 1998թ. օգոստոսի 3-ին, Սոֆիայի քաղաքապետը հանրահավաքն արգելելու մասին հրաման էր արձակել՝ Ցույցերի և երթերի մասին օրենքի 12(2)(2) հոդվածի համաձայն: Նա, առանց լրացուցիչ հիմնավորման, եզրակացրել էր, որ միջոցառումը նախադրյալներ կստեղծի «հասարակական կարգը խախտելու համար»: Որոշման պատճենն ուղարկվել էր Սոֆիայի ոստիկանություն՝ կատարման համար:

14. Որոշման դեմ, ըստ էության, բողոք չէր ներկայացվել:

### **C. 1998թ. սեպտեմբերի 12-ին ծրագրված հանրահավաքը**

15. 1998թ. սեպտեմբերի 1-ին առաջին դիմողը, հանդես գալով ՄՄԿ Իլինդեն - ՊԻՐԻՆ-ի անդամների ու հետևորդների անունից, Սոֆիայի քաղաքապետին տեղեկացրել էր, որ 1998թ. օգոստոսի 12-ին, ցերեկվա ժամը 12-ից մինչև 2-ը Ազգային թատրոնի դիմաց իրենք հանրահավաք են ծրագրել: Նա հայտնել էր, որ միջոցառումը նվիրված է լինելու «Մակեդոնացիների դեմ իրականացված ցեղասպանության հիշատակի» օրվան: Ակնկալվում էր մոտ հարյուր քսան անձի մասնակցություն: Դիմողը քաղաքապետին հավաստել էր, որ

---

<sup>1</sup> Բուլղարիայի, Հունաստանի, Մոնտենեգրոյի, Ռումինիայի և Սերբիայի միջև 1913թ. կնքված համաձայնագիր, որով վերջ դրվեց Բալկանյան երկրորդ պատերազմին (1913):

միջոցառումը միանգամայն խաղաղ է ընթանալու և անկարգություններ տեղի չեն ունենա:

16. Հաջորդ օրը՝ 1998թ. սեպտեմբերի 2-ին, Սոֆիայի քաղաքապետը հանրահավաքն արգելելու որոշում էր կայացրել՝ Յուլյցերի և երթերի մասին օրենքի 12(2)(2) հոդվածի համաձայն: Նա եզրակացրել էր, որ միջոցառումը նախադրյալներ կստեղծի «հասարակական կարգը խախտելու համար»՝ առանց լրացուցիչ հիմնավորումներ ներկայացնելու: Որոշման պատճենը կատարման համար ուղարկվել էր Սոֆիայի ոստիկանություն:

17. Նույն օրն առաջին դիմողն այդ որոշումը բողոքարկել է Սոֆիայի շրջանային դատարան: Նա պնդել է, որ հրամանը հիմնավորված չէ, և որ հիմքեր չեն եղել ենթադրելու, որ ծրագրված հանրահավաքը կվտանգի հասարակական կարգը: Եթե տեղական իշխանություններին թույլատրվեր առանց հիմնավորման արգելել հանրային միջոցառումները, ապա հավաքների ազատության իրավունքի իրավական երաշխիքներն ի չիք կդառնային:

18. 1998թ. սեպտեմբերի 8-ին Սոֆիայի շրջանային դատարանը փակ նիստում որոշում է կայացրել, որ իրավասու չէ քննության առնելու բողոքը: Նշվել էր, որ քաղաքապետի հրամանն առաջին հերթին պետք է բողոքարկվեր Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտե՝ Յուլյցերի և երթերի մասին օրենքի 12(4) հոդվածի համաձայն: Համապատասխան անձը դատարան կարող է դիմել միայն այդ բողոքը չբավարարվելու դեպքում: Հետևաբար՝ դատարանը կասեցրել է գործի վարույթը և բողոքն ուղարկել Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտե: Իր որոշման մասին դատարանը, ըստ երևույթին, չէր տեղեկացրել դիմողին:

19. Քանի որ 1998թ. սեպտեմբերի 12-ին քաղաքապետի արգելքն այդպես էլ չեղյալ չէր հայտարարվել, դիմողները

ՄՄԿ Իվինդեն - ՊԻԲԻՆ-ի անդամներին ու հետևորդներին տեղեկացրել էին, որ հանրահավաքը տեղի չի ունենա:

20. 1998թ. սեպտեմբերի 17-ին առաջին դիմողը, որն այդ ժամանակ արդեն տեղյակ էր Սոֆիայի շրջանային դատարանի 1998թ. սեպտեմբերի 8-ի որոշման մասին (տե՛ս վերը՝ կետ 18), այդ որոշումը բողոքարկել է Սոֆիայի քաղաքային դատարան: Նա պնդել է, որ բողոքը ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեին ուղարկելու մասին որոշում կայացնելով՝ դատարանը սխալ է թույլ տվել: Այդ մարմնի մասին հիշատակվում է Յուլյեթի և երթերի մասին օրենքում, որն ընդունվել էր 1991թ. Սահմանադրությունից առաջ, երբ տեղական ինքնակառավարման մարմիններն այլ կառուցվածք ունեին: 1991թ. Սահմանադրությամբ Գործադիր կոմիտեն, որը տեղական իշխանությունների գործադիր մարմին էր, դադարել էր գոյություն ունենալ: Միայն էր պնդելը, որ Մունիցիպալ խորհուրդը՝ տեղի օրենսդիր մարմինը, Գործադիր կոմիտեի իրավահաջորդն է, և որ այն իրավասու է քննության առնել քաղաքապետի հրամանների դեմ բերված բողոքները: Ավելին, Մունիցիպալ խորհուրդն իր նիստերը գումարում էր երկարատև ընդմիջումներով, ինչի արդյունքում խորհուրդը ժամանակին չէր քննել ծրագրված հանրահավաքի վերաբերյալ բողոքը:

21. Սոֆիայի քաղաքային դատարանն իր 2002թ. մարտի 19-ի որոշմամբ բողոքը մերժել է: Որոշման մեջ նշված էր, որ ըստ Յուլյեթի և երթերի մասին օրենքի 12(4) հոդվածի՝ հանրահավաքի կազմակերպիչը քաղաքապետի որոշումը կարող է բողոքարկել Մունիցիպալ խորհուրդ, որը բողոքի վերաբերյալ որոշում պետք է կայացնել քսանչորս ժամվա ընթացքում: Մունիցիպալ խորհրդի կողմից բողոքը մերժելու դեպքում միայն հայցը կարող էր ներկայացվել դատարան: Վարչական վարույթի մասին օրենքի 35(2) հոդվածի համաձայն՝ վարչական գործողությունների դատական

ստուգումը հնարավոր է միայն, եթե վարչական պաշտպանության միջոցները սպառվել են, կամ եթե սպառվել է այդ միջոցներին դիմելու համար սահմանված ժամկետը: Տվյալ գործով որևէ վարչական բողոք չէր ներկայացվել, մինչդեռ Սոֆիայի շրջանային դատարան բողոքը ներկայացվել էր 1998թ. սեպտեմբերի 2-ին, այսինքն՝ նախքան Յուլյեթի և երթերի մասին օրենքի 12(4) հոդվածով սահմանված քսանչորսժամյա ժամկետը լրանալը: Դատարանը նաև նշել էր, որ անհիմն է փաստարկն առ այն, որ Մունիցիպալ խորհուրդը գումարվում է երկարատև ընդմիջումներով և, հետևաբար, չէր կարող ժամանակին քննության առնել բողոքը, քանի որ, մի կողմից՝ անգամ ոչ այնքան հաջող իրավանդումը ենթակա է կատարման և, մյուս կողմից՝ վարչական մարմնի կողմից քսանչորս ժամվա ընթացքում բողոքին ընթացք չտալու դեպքում ծրագրված միջոցառումը, Յուլյեթի և երթերի մասին օրենքի 12(5) հոդվածի հիման վրա, կարող էր տեղի ունենալ: Բացի դրանից, չէր կարելի պնդել, որ Մունիցիպալ խորհուրդն իրավագոր չէր քննության առնելու քաղաքապետի արգելող որոշման դեմ բերված բողոքը, քանի որ Տեղական ինքնակառավարման և տեղական վարչակազմի մասին օրենքի 21(2) հոդվածով սահմանված է, որ Մունիցիպալ խորհուրդն իրավասու է որոշումներ կայացնելու տեղական համայնքի համար նշանակություն ունեցող բոլոր հարցերով:

22. Առաջին դիմողը դիմել է Գերագույն վճռաբեկ դատարան՝ պնդելով իր փաստարկները:

23. Գերագույն վճռաբեկ դատարանն իր 2003թ. մարտի 11-ի վերջնական որոշմամբ բողոքը մերժել էր: Դատարանը նշել էր, որ գործի նկատմամբ Սոֆիայի քաղաքային դատարանի դիրքորոշումը ճիշտ է, սակայն համաձայն չէր քաղաքային դատարանի ներկայացրած հիմնավորմանը: Սոֆիայի քաղաքային դատարանի կողմից գործով որոշում

կայացնելու պահին՝ ծրագրված միջոցառման օրվանից ավելի քան երեքուկես տարի անց, առաջին դիմողն այլևս հետաքրքրված չէր արգելող որոշման դեմ բողոք ներկայացնելու հարցում: Ավելին, այդ հետաքրքրությունն արդեն նվազել էր Սոֆիայի շրջանային դատարանի որոշման դեմ բողոք ներկայացնելու պահին:

## II. ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

24. 1991թ. Սահմանադրության համապատասխան դրույթները սահմանում են.

### «Հոդված 43.

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ և առանց գենքի հանրահավաքների և երթերի իրավունք:

2. Ցույցեր ու երթեր կազմակերպելու և անցկացնելու կարգը սահմանվում է օրենքով:

3. Շինությունների ներսում անցկացվող հավաքների համար թույլտվություն չի պահանջվում:»:

### «Հոդված 44. մաս 2.

Արգելվում է այն կազմակերպությունների գործունեությունը, որոնց գործողություններն ուղղված են երկրի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության դեմ կամ նպատակ ունեն ռասայական, ազգային կամ կրոնական թշնամանք հրահրել, կամ ոտնահարում են այլոց իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև գաղտնի կամ ռազմականացված կառույցներ են ստեղծում, կամ փորձում են իրենց նպատակներին հասնել բռնության միջոցով:»:

25. Յույցեր կազմակերպելու համար նախատեսված իրավական պահանջները սահմանված են 1990թ. Յույցերի և երթերի մասին օրենքով („Закон за събранията, митингите и манифестациите“): Դրա համապատասխան դրույթներն են.

### **«Հոդված 2.**

Յույցեր, հանրահավաքներ և երթեր կարող են կազմակերպել անհատները, միավորումները, քաղաքական կամ այլ հասարակական կազմակերպությունները»:

### **«Հոդված 8(1).**

Այն դեպքերում, երբ ցույցը կամ հանրահավաքը նախատեսվում է անցկացնել բացօթյա, կազմակերպիչները պարտավոր են միջոցառումը սկսելուց առնվազն քառասունչորս ժամ առաջ գրավոր տեղեկացնել [համապատասխան] Ժողովրդական խորհրդին կամ քաղաքապետարանին և նշել կազմակերպիչի անվանումը, [ցույցի կամ հանրահավաքի] նպատակը, անցկացման վայրը և ժամանակը»:

26. Հանրահավաքների անցկացման դեմ ուղղված արգելքները ևս սահմանված են Յույցերի և երթերի մասին օրենքով.

### **«Հոդված 12.**

1. Եթե ցույցի կամ հանրահավաքի ժամանակը կամ վայրը, կամ երթի անցկացման երթուղին կարող է հանգեցնել հասարակական կարգին կամ երթևեկությանը սպառնացող վտանգի, ապա համապատասխան Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեի նախագահը կամ քաղաքապետը պետք է ներկայացնեն իրենց առաջարկությունները:

2. Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեի նախագահը կամ քաղաքապետն իրավունք ունեն արգելել ցույցի,

հանրահավաքի կամ երթի անցկացումը, եթե հավաստի տեղեկատվություն կա այն մասին, որ այն.

1. նպատակ ունի բռնությամբ տապալել սահմանադրական կարգը կամ ուղղված է երկրի տարածքային ամբողջականության դեմ.

2. կվտանգի հասարակական կարգը տեղական համայնքում.

...

4. կոտնահարի այլոց իրավունքներն ու ազատությունները:

3. Արգելքը կատարվում է պատճառաբանված գրավոր որոշմամբ, որը կայացվում է արգելման մասին հայտնելուց հետո ոչ ուշ, քան քսանչորս ժամվա ընթացքում:

4. Արգելման դեպքում ցույցի, հանրահավաքի կամ երթի կազմակերպիչը կարող է բողոք ներկայացնել Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտե: Գործադիր կոմիտեն քսանչորս ժամվա ընթացքում որոշում է կայացնում:

5. Եթե Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեն [վերոհիշյալ] ժամկետում որոշում չի կայացնում՝ երթը, հանրահավաքը կամ ցույցը կարող է տեղի ունենալ:

6. Եթե բողոքը չի բավարարվում, վեճը հանձնվում է համապատասխան շրջանային դատարանի քննությանը, որը պետք է որոշում կայացնի հնգօրյա ժամկետում: Դատարանի որոշումը վերջնական է:»:

27. Յուլյեթի ու երթերի մասին օրենքն ուժի մեջ է մտել 1990 թվականին, երբ դեռևս գործում էր 1971թ.

Սահմանադրությունը: Այդ Սահմանադրությամբ տեղական գործադիր պետական մարմինները Շրջանային ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեներն էին: Քաղաքապետերը, որոնք բազմիցս հիշատակվում էին Ցույցերի և երթերի մասին օրենքում, ներկայացնում էին գյուղերում և քաղաքներում գործող գործադիր կոմիտեները, որոնք գտնվում էին համապատասխան ժողովրդական խորհուրդների իրավասության ներքո:

28. 1991թ. Սահմանադրությունը լուծարել էր Գործադիր կոմիտեները և ձևավորել համընդհանուր և ուղղակի քվեարկությամբ ընտրվող քաղաքապետի պաշտոն՝ որպես «համայնքներում գործադիր իշխանությամբ օժտված մարմին» (հոդված 139, մաս 1):

29. Վարչական գործերով վարույթի և վարչական ակտերի դատական ստուգման ընդհանուր կանոնները սահմանվել են 1979թ. Վարչական վարույթի մասին օրենքով („Закон за административното производство“): Այդ օրենքի 19(1) հոդվածը սահմանում է, որ վարչական ակտերը կարող են բողոքարկվել վերադաս վարչական մարմնին կամ պաշտոնատար անձին: Բողոքը պետք է քննության առնվի վարչական գործողությունը կատարած անձի անմիջական վերադաս մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից (հոդված 27(1)): Քաղաքապետերի գործողությունները կարող են բողոքարկվել նահանգապետերին (հոդված 27(3)): Վարչական ակտերը կարող են բողոքարկվել նաև իրավասու դատարաններ (հոդված 33(1)): Բողոքը պետք է ներկայացվի վարչական միջոցները սպառելուց կամ դրանցից օգտվելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո (հոդված 35(2)):

30. Տեղական ինքնակառավարման և տեղական վարչակազմի մասին 1991թ. օրենքի („Закон за местното самоуправление и местната администрация“) 21(1) հոդվածը

սահմանում է Մունիցիպալ խորհրդի լիազորությունների ցանկը: Դրանում բացակայում է քաղաքապետի որոշումների դեմ բերված բողոքները քննելու լիազորությունը: 21(2) հոդվածը սահմանում է, որ Մունիցիպալ խորհուրդն ընդհանուր առմամբ իրավասու է լուծելու տեղական համայնքի համար կարևորություն ներկայացնող այն հարցերը, որոնք այլ մարմինների իրավասությունից դուրս են:

## **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ**

### **I. ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

31. Դիմողների ներկայացուցիչը 2004թ. նոյեմբերի 16-ին Դատարանին նամակով հայտնել է, որ զանգատը ներկայացնելուց հետո մահացել է երրորդ դիմողը՝ պրն Դիմչո Դիմիտրով Խրիստովը (մահվան ամսաթիվը չի նշվել): Պրն Խրիստովի ժառանգներից կամ մերձավոր ազգականներից որևէ մեկը վերջինիս անունից հանդես գալու մտադրություն Դատարանին չի հայտնել (տե՛ս վերը՝ կետ 8):

32. Վերոգրյալը հաշվի առնելով՝ Դատարանը, Կոնվենցիայի 37 հոդվածի 1-՞ կետի համաձայն, գտնում է, որ զանգատի հետագա քննությունը նպատակահարմար չէ, քանի որ այն վերաբերում է պրն Խրիստովին (տե՛ս *Özgür Gündem v. Turkey*, թիվ 23144/93, 34 և 36 կետեր, ECHR 2000-III): Հետևաբար, գործն այդ մասով պետք է հանվի քննության ենթակա գործերի ցանկից:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 11-ԲԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԳԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

33. Կոնվենցիայի 11-րդ հոդվածի հիման վրա դիմողները բողոքել են, որ իրենց ծրագրած երկու խաղաղ հանրահավաքների արգելումները կատարվել են ներպետական օրենսդրության խախտումներով և անհրաժեշտ չեն եղել ժողովրդավարական հասարակությունում:

34. 11-րդ հոդվածի համապատասխան հատվածը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով:...»:

### **A. Կառավարության առարկությունները ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու կապակցությամբ**

#### *1. Կողմերի դիրքորոշումները*

35. Գանգատի ընդունելիության և էության վերաբերյալ իր առարկությունները ներկայացնելիս Կառավարությունը նշել է,

որ դիմողները չեն սպառել ներպետական պաշտպանության միջոցները:

36. Կառավարությունն առաջին հերթին հայտնել է, որ քաղաքապետի երկու արգելքների վերաբերյալ դիմողները պետք է վարչական բողոքներ ներկայացնեին Մունիցիպալ խորհուրդ: Ցույցերի և երթերի մասին օրենքի 12(5) հոդվածին համապատասխան՝ միջոցառումները կշարունակեին արգելված համարվել միայն այն դեպքում, եթե Խորհուրդն ուժի մեջ թողներ արգելքները՝ դրանց դեմ բողոքներ ներկայացնելուց հետո քսանչորս ժամվա ընթացքում:

37. Կառավարությունն այնուհետև փաստարկել է, որ որևէ կերպ չի հավաստվել, որ դիմողները Սոֆիայի շրջանային դատարանին բողոք են ներկայացրել առաջին արգելքի վերաբերյալ:

38. Դիմողները նշել են, որ ո՛չ ենթադրյալ բողոքը Մունիցիպալ խորհրդին, ո՛չ էլ Սոֆիայի շրջանային դատարան ներկայացված բողոքը չէին կարող դիտվել որպես պաշտպանության մատչելի և արդյունավետ միջոցներ: Նրանք փաստարկել են, որ ծրագրված հանրային միջոցառման արգելումից պաշտպանվելու միջոցը, Կոնվենցիայի 35 հոդվածի 1-ին կետի այլ պահանջներին համապատասխանելու հետ մեկտեղ, պետք է նաև արագ ընթացք ունենա, և դրա արդյունքում մինչև ծրագրված միջոցառման օրը պետք է որոշումը կայացված լինի: Կառավարության առաջարկած միջոցներից ոչ մեկ այս չափանիշին չի համապատասխանում:

39. Ինչ վերաբերում է Մունիցիպալ խորհրդին վարչական բողոք ներկայացնելու հնարավորությանը, ապա դիմողներն առաջին հերթին նշել են, որ ներպետական օրենսդրությունը նման ընթացակարգ հստակ չի սահմանում: Ցույցերի և երթերի մասին օրենքի 12-րդ հոդվածը վկայակոչում է գոյություն չունեցող մարմին՝ Ժողովրդական խորհրդի գործադիր

կոմիտեին: Իրավական հիմքեր չկային եզրակացնելու, որ այդ մարմինը փոխարինվել է Մունիցիպալ խորհրդով: Երկրորդ, Յուլյեթի և երթերի մասին օրենքի 12-րդ հոդվածի նման կառուցվածքն անտրամաբանական էր, որովհետև այն սահմանում էր, որ բողոքը պետք է քննվեր քսանչորս ժամվա ընթացքում, մինչդեռ Մունիցիպալ խորհրդի նիստերը գումարվում էին ամսվա ընթացքում ընդամենը երկու անգամ: Երրորդ, Կառավարությունը՝ ի դեմս Մունիցիպալ խորհրդի, գեթ մեկ անգամ որոշում չէր կայացրել հանրային միջոցառումն արգելելու վերաբերյալ քաղաքապետի կարգադրության դեմ ներկայացված բողոքի հիման վրա: Չորրորդ, գործի հանգամանքները ցույց են տալիս, որ Մունիցիպալ խորհրդին բողոք ներկայացնելն արդյունք չէր տալու, քանի որ խորհուրդը երբևէ որոշում չէր կայացրել Սոֆիայի շրջանային դատարանի կողմից Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեին ուղարկված բողոքի հիման վրա: Եվ վերջապես, դիմողները հայտարարել են, որ Սոֆիայի Մունիցիպալ խորհուրդը չէր կարող ժամանակին քննության առնել բողոքը, քանի որ 1998թ. օգոստոսին նիստեր չէին գումարվել, և դրանից հետո առաջին նիստը գումարվել էր 1998թ. սեպտեմբերի 17-ին, միչնդեռ ծրագրված միջոցառումները նախատեսված էին 1998թ. օգոստոսի 10-ին և սեպտեմբերի 12-ին, իսկ արգելքները դրվել էին համապատասխանաբար՝ օգոստոսի 3-ին և սեպտեմբերի 1-ին:

40. Այնուհետև, դիմողներն ընդունել էին, որ Սոֆիայի շրջանային դատարանին որևէ բողոք չէր ներկայացվել առաջին արգելքի վերաբերյալ՝ նշելով, սակայն, որ երկրորդ արգելքի դեմ բողոք ներկայացնելուց հետո Սոֆիայի շրջանային դատարանը չէր քննել այն, այլ ուղարկել էր Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտե: Սոֆիայի շրջանային դատարանի կողմից Յուլյեթի և երթերի մասին

օրենքի 12-րդ հոդվածի մեկնաբանությունը մեկնաբանման միակ հնարավոր տարբերակը չէր, ինչի մասին վկայում են նաև *Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria* գործի փաստերը (թիվ 29221/95 և 29225/95, 24 և 25 կետեր, ECHR 2001-IX): Այդ գործով մեկ այլ շրջանային դատարան ձեռնամուխ էր եղել համանման բողոքի քննությանը՝ առանց բողոքը Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեին ուղարկելու: Տվյալ գործով Սոֆիայի շրջանային դատարանը բողոքն ուղարկել էր ոչ թե Մունիցիպալ խորհրդին, այլ Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեին՝ մի մարմնի, որը դադարել էր գոյություն ունենալ 1991 թվականից: Միայն Սոֆիայի քաղաքային դատարանն էր պարզաբանել, որ այդ մարմինն այլևս գոյություն չունի և այդ մարմնի իրավասությունները՝ կապված հանրային միջոցառումներն արգելելու վերաբերյալ քաղաքապետի կարգադրությունների դեմ ուղղված բողոքները քննելու հետ, ստանձնել է Մունիցիպալ խորհուրդը: Դիմողների կարծիքով՝ դատարանների մասն դիրքորոշումն է պատճառ հանդիսացել բողոքն ըստ էության չքննելու և իրենց պաշտպանության արդյունավետ միջոցներից զրկելու համար: Դիմողները եզրակացրել են, որ Սոֆիայի դատարանների կողմից Յուլյեթի և երթերի մասին օրենքի 12-րդ հոդվածի այսպիսի մեկնաբանության պարագայում առաջին արգելքի դեմ բողոք ներկայացնելն անարդյունք կլիներ:

## *2. Դատարանի գնահատականը*

41. Սույն գործով կայացված ընդունելիության մասին որոշման մեջ Դատարանը նշել էր, որ արգելող գործողությունների արդյունքում Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտման կապակցությամբ ներպետական պաշտպանության միջոցների սպառման հարցը սերտորեն

կապված է արդյունավետ պաշտպանության միջոցների բացակայության արդյունքում Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտման կապակցությամբ ներկայացված գանգատի հետ: Հետևաբար, Դատարանը որոշել էր Կառավարության առարկությունները քննության առնել գործի ըստ էության քննության հետ մեկտեղ (տե՛ս վերը՝ կետ 5), ուստի այժմ դրանք քննության կառնի:

42. Նախ, Դատարանը ուշադրություն է հրավիրում գործի փաստերի շուրջ առկա կոնկրետ համատեքստի վրա (տե՛ս վերը՝ 10 և 11 կետեր): Սույն գործը մեկն է այն մի շարք գործերից, երբ իշխանությունները միջամտում են իրենց մակեդոնացիների համարող անձանց կողմից կազմակերպված միջոցառումներին:

43. Նշված գործերից առաջինում՝ *Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria* գործում, Դատարանը, քննության առնելով քաղաքապետերի կողմից Միացյալ մակեդոնական Իլինդեն կազմակերպության կողմից ծրագրված հանրային միջոցառումների պարբերաբար արգելումը (տե՛ս վերը՝ կետ 10), եզրակացրել էր, որ «իշխանությունները որդեգրել են Իլինդենի կազմակերպած անխտիր բոլոր ցույցերն արգելելու պրակտիկա» (տե՛ս վերոհիշյալ *Stankov and the United Macedonian Organisation Ilinden* գործը, կետ 109): Դատարանն այնուհետև եզրակացրել էր, որ դեպքերից յուրաքանչյուրի պարագայում իրավասու դատարանները մերժել են Իլինդենի բողոքներն ընդդեմ անհիմն արգելքների (նույն գործի 19, 21, 23 և 25 կետեր):

44. Երկրորդ՝ *the United Macedonian Organisation Ilinden and Ivanov v. Bulgaria* գործում ևս Դատարանը նկատել էր Իլինդենի կազմակերպած ցույցերը քաղաքապետի կողմից արգելելու դեմ ներկայացված բողոքները տարբեր պատճառներով մերժելու հաստատուն միտում (տե՛ս *The United Macedonian Organisation Ilinden and Ivanov v. Bulgaria*,

քիվ 44079/98, 2004թ. սեպտեմբերի 9-ի որոշումը): Այս հետևության հիման վրա Դատարանը եզրակացրել էր, որ Պիրին Մակեդոնիայի տարբեր քաղաքների շրջանային դատարաններ ներկայացված բողոքները տվյալ կոնկրետ հանգամանքներում չէին կարող համարվել «հաջողության հասնելու ողջամիտ հավանականություն ենթադրող պաշտպանության միջոցներ» (նույն տեղում):

45. Անդրադառնալով սույն գործի առանձնահատուկ հանգամանքներին՝ Դատարանը ներկայացնում է հետևյալ նկատառումները:

46. Կառավարության առարկությունների առաջին մասի կապակցությամբ (տե՛ս վերը՝ կետ 36) Դատարանը նշում է, որ նման փաստարկները միանգամայն անհիմն են ճանաչվել վերը հիշատակված *Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria* գործով որոշմամբ (Հանձնաժողովի 1998թ. հունիսի 29-ի չիրապարակված որոշում): Այդ գործով նախկին Հանձնաժողովը գտել էր.

«Քանի որ Կառավարությունը վկայակոչել է [Յուլյեթի և երթերի մասին օրենքի] 12(4) հոդվածը, որը սահմանում է Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեին բողոք ներկայացնելու հնարավորություն, Հանձնաժողովը նշում է, որ նման պետական մարմին 1991 թվականից ի վեր Բուլղարիայում գոյություն չունի: Կառավարությունը սկզբում մատնանշել էր, որ գործադիր կոմիտեների վերացումից հետո բողոքներ քննելու իրավասությունը ստանձնել են մունիցիպալ խորհուրդները: Այդուհանդերձ, Հանձնաժողովը գտնում է, որ ըստ համապատասխան օրենքների՝ մունիցիպալ խորհուրդները չեն գործում որպես դատական մարմիններ և իրավասու չեն բողոքներ քննության առնելու: Կառավարությունը չի ներկայացրել որևէ օրինակ, որը կհանգեցներ այլ եզրակացության»:

47. Սույն գործի փաստերը վերը շարադրվածից էականորեն չեն տարբերվում: Հակառակ Կառավարության պնդումների՝ ներպետական օրենսդրությունում չկա որևէ դրույթ, որը կվկայեր, որ 1991 թվականից ի վեր Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեի լիազորությունները փոխանցվել են Մունիցիպալ խորհրդին, կամ որ Մունիցիպալ խորհուրդն իրավասու է քննել քաղաքապետի կարգադրությունների դեմ բերված բողոքները (տե՛ս վերը՝ 27-30 կետեր):

48. Մասնավորապես, Տեղական ինքնակառավարման և տեղական վարչակազմի մասին 1991թ. օրենքի (տե՛ս վերը՝ կետ 30) 21(2) հոդվածում սահմանված՝ տեղական համայնքի համար նշանակություն ունեցող հարցեր լուծելու լիազորությունը խիստ անորոշ է՝ այն որպես քաղաքապետի կարգադրությունների դեմ բերված բողոքների քննությունը Մունիցիպալ խորհրդին վերապահող դրույթ մեկնաբանելու համար: Ավելին, համաձայն 1979թ. Վարչական վարույթի մասին օրենքի 27(1) հոդվածի՝ վարչական բողոքը քննվում է գործողությունը կատարած մարմնի կամ անձի անմիջական վերադաս մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից (տե՛ս վերը՝ կետ 29), մինչդեռ Բուլղարիայի օրենսդրությունից չի բխում, որ Մունիցիպալ խորհուրդը քաղաքապետի անմիջական վերադասն է:

49. Ընդհակառակը, 1991թ. Սահմանադրության համաձայն՝ Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեին փոխարինում է քաղաքապետը (տե՛ս վերը՝ կետ 28): Հետևաբար, դիմողները չեն կարող մեղադրվել այն հարցում, որ չեն փորձել բողոք ներկայացնել գոյություն չունեցող մարմնին: Դիմողների կողմից Սոֆիայի շրջանային դատարան ներկայացված բողոքը վերահասցեագրելիս դատարանը չէր նշել, որ այն ուղարկվում է Մունիցիպալ խորհրդին (տե՛ս վերը՝ կետ 18): Միայն Սոֆիայի քաղաքային դատարանն էր երեքուկես տարի անց նշել, որ Ժողովրդական

խորհրդի գործադիր կոմիտեն փոխարինվել է Մունիցիպալ խորհրդով (տե՛ս վերը՝ կետ 20): Գերագույն վճռաբեկ դատարանը նշել էր, որ չի կիսում այդ կարծիքը (տե՛ս վերը՝ կետ 23): Ամեն դեպքում, ակնհայտ է, որ Սոֆիայի Մունիցիպալ խորհուրդը չի քննել բողոքը, չնայած որ այն հասցեագրվել էր իրեն: Ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ Մունիցիպալ խորհուրդն այլ կերպ կգործեր և կքններ անմիջականորեն իրեն ներկայացված բողոքը:

50. Կառավարության առարկությունների երկրորդ մասի առնչությամբ (տե՛ս վերը՝ կետ 37) Դատարանը նշում է, որ դիմողները, անկասկած, Սոֆիայի շրջանային դատարանին բողոք ներկայացրել են միայն երկրորդ արգելքի կապակցությամբ (տե՛ս վերը՝ կետ 14): Այդուհանդերձ, Դատարանը նաև նկատի է առնում, որ այս բողոքը, որը ներկայացվել էր առաջին արգելքից մեկ ամիս անց, Սոֆիայի շրջանային դատարանի կողմից չէր քննվել, այլ փոխարենը վերահասցեագրվել էր գոյություն չունեցող մարմնի՝ Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեին և, հետևաբար, մնացել առանց քննության (տե՛ս վերը՝ կետ 18): Բողոքի վերահասցեագրման դեմ ուղղված հետագա բողոքները ևս հաջողությամբ չէին պսակվել: Ավելին, դրանք չափից ավելի շատ ժամանակ էին խլել (տե՛ս վերը՝ 20-23 կետեր): Ճիշտ է, նման իրադրություններում այլ շրջանային դատարաններ քննության առել էին քաղաքապետի արգելող որոշումների դեմ ուղղված բողոքները (տե՛ս *Stankov and the United Macedonian Organisation Ilinden*, 23 և 30 կետեր): Չնայած դրան, հաշվի առնելով, որ Սոֆիայի շրջանային դատարանը մերժել էր քննել ընդամենը մեկ ամիս հետո՝ 1998թ. սեպտեմբերին ներկայացված նույնանման բողոքը՝ ոչինչ չի վկայում այն մասին, որ այդ ընթացակարգն արդյունավետ կլիներ մեկ ամիս առաջ:

51. Հետևաբար՝ արգելող երկու որոշումների դեմ ուղղված բողոքը չի կարող անընդունելի հայտարարվել ներպետական միջոցները չսպառելու հիմքով:

## **B. Ըստ էության**

### *1. Կողմերի դիրքորոշումները*

52. Կառավարության կարծիքով դիմողների՝ հանրահավաքների ազատության իրավունքի սահմանափակումներն արդարացված էին:

53. Նախևառաջ, քանի որ Մունիցիպալ խորհուրդը, որին Սոֆիայի շրջանային դատարանը վերահասցեագրել էր երկրորդ արգելքի վերաբերյալ բողոքը, ժամանակին չէր քննել այն, դիմողները կարող էին իրականացնել 1998թ. սեպտեմբերի 12-ի համար ծրագրված միջոցառումը՝ Յուլյերի և երթերի մասին օրենքի 12(5) հոդվածով սահմանված կարգով: Նույնը հաստատել էր նաև Սոֆիայի քաղաքային դատարանը՝ իր 2002թ. մարտի 19-ի վճռով:

54. Կառավարությունն այնուհետև փաստարկել է, որ արգելքները հիմնված են եղել օրենքի, մասնավորապես՝ Յուլյերի և երթերի մասին օրենքի 12(2)(2) հոդվածի վրա: Բացի դրանից, կիրառված միջոցները, որոնց դեմ ուղղված է գանգատը, հետապնդել է մի շարք օրինաչափ նպատակներ՝ ազգային և հասարակական անվտանգության պաշտպանություն, տեղական համայնքներում հասարակական կարգի պահպանում, այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանություն և անկարգությունների ու հանցագործությունների կանխում: Դրանք նաև անհրաժեշտ են եղել ժողովրդավարական հասարակությունում, քանի որ իշխանությունները գործել են երկրում ընդունված օրենքների շրջանակներում, իրենց

գործողությունները կամայական չեն եղել և իրականացվել են ի կատարումն Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված քաղաքացիների իրավունքները պահպանելու իրենց պարտականության: Հղում կատարելով *Gustafsson v. Sweden* գործին (1996թ. ապրիլի 25-ի վճիռը, *Reports of Judgments and Decisions* 1996-II, 652-53 էջեր, կետ 45)՝ Կառավարությունը նշել է, որ Պայմանավորվող պետություններն ազատ են իրավաչափ նպատակին հասնելու համար կիրառվելիք միջոցի ընտրության հարցում:

55. Դիմողները նշել են, որ իրենց ծրագրած երկու միջոցառումների պարագայում էլ ակնհայտորեն տեղի է ունեցել միջամտություն իրենց հավաքների ազատության իրավունքի իրականացմանը: Մունիցիպալ խորհուրդ դիմել էին ոչ թե իրենք, այլ Մոֆիայի շրջանային դատարանը, որը բողոքը վերահասցեագրել էր գոյություն չունեցող մարմնի՝ Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեին: Հետևաբար, զարմանալի չէ, որ այդ մարմինը բողոքին ընթացք չէր տվել: Նման պայմաններում անիրատեսական կլիներ ենթադրելը, որ երկրորդ արգելքը դադարել էր գործելուց: Ո՛չ դիմողները և ո՛չ էլ ոստիկանները, ում խստիվ կարգադրված էր կանխել դիմողների կողմից միջոցառման անցկացումը, ժամանակին չեն տեղեկացվել, որ բողոքը վերահասցեագրվել է:

56. Դիմողներն այնուհետև հայտնել են, որ ծրագրված հանրահավաքների արգելումը պատճառաբանված չէր, ուստի՝ կամայական էր և օրենքով չնախատեսված: Իսկ հիմնավորման բացակայությունն անհնարին էր դարձնում կիրառված միջոցների համարժեքության գնահատումը: Դիմողների կարծիքով՝ ամեն դեպքում արգելքները պատշաճ և բավարար հիմնավորված չէին:

## 2. Դատարանի գնահատականը

### (a) 11-րդ հոդվածի կիրառելիությունը

57. Կառավարությունը չի փաստարկել, որ ՄՄԿ Իլինդեն - ՊԻՐԻՆ-ի ծրագրած միջոցառումների կազմակերպիչները և մասնակիցները բռնություն գործադրելու մտադրություն են ունեցել: Ուստի Դատարանը հակառակ հետևության հանգելու հիմքեր չունի: Հետևաբար՝ 11-րդ հոդվածը կիրառելի է (տե՛ս վերոհիշյալ *Stankov and the United Macedonian Organisation Ilinden*-ի գործը, 76-78 կետեր):

### (b) Արդյո՞ք սահմանափակումներ տեղի են ունեցել

58. Կառավարությունը չի հակադարձել այն պնդումներին, որ ՄՄԿ Իլինդեն - ՊԻՐԻՆ-ի ծրագրած առաջին հանրահավաքն իշխանությունների կողմից արգելվել է, և որ այդ արգելքը հանդիսացել է դիմողների՝ հավաքների ազատության իրավունքի սահմանափակում: Այլ եզրակացության հանգելու համար Դատարանը հիմքեր չունի:

59. Ինչ վերաբերում է երկրորդ հանրահավաքին՝ Դատարանը նշում է, որ 1971 թվականի Մահմանադրության համաձայն՝ Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեն տեղական համայնքի գործադիր իշխանության մարմինն էր (տե՛ս վերը՝ կետ 27): Ինչպես նշվել է վերը՝ 1991 թվականին այդ մարմնին փոխարինել էր քաղաքապետը, այլ ոչ թե Մունիցիպալ խորհուրդը (տե՛ս վերը՝ 28 և 49 կետեր): Գոյություն չունեցող մարմնի կողմից դիմողների բողոքին ընթացք չտալը միանգամայն բնական էր, մինչդեռ, հակառակ Կառավարության պնդումներին, Մունիցիպալ խորհուրդը բողոքը քննելու իրավասությամբ ակնհայտորեն օժտված չէր: Նման պայմաններում դժվար կլինե՞ր ենթադրել, որ արգելքն

իրականում ուժը կորցրած է եղել միայն այն պատճառով, որ Մուհիցիպալ խորհուրդը չէր քննել այն:

60. Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ երկու միջոցառումների դեպքում էլ իշխանությունները սահմանափակել են դիմողների՝ հանրահավաքների ազատության իրավունքի իրականացումը:

61. Այդ նպատակով Դատարանը պետք է պարզի, թե արդյո՞ք սահմանափակումներն օրենքով են նախատեսված եղել և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում՝ իրավաչափ նպատակի հասնելու համար, ինչպես սահմանված է 11-րդ հոդվածի 2-րդ մասով:

### **(c) Սահմանափակումների արդարացվածությունը**

62. Սահմանափակումների իրավաչափության առնչությամբ Դատարանը նշում է, որ չնայած քաղաքապետը մանրամասն չի պատճառաբանել արգելքների կիրառումը, նա, այդուհանդերձ, հիմնվել է հասարակական կարգի ենթադրյալ խախտման վրա, ինչը, համաձայն ներպետական օրենսդրության, կարող է արդարացնել խաղաղ հանրահավաքների իրավունքի սահմանափակումը (տես վերը՝ 13, 16 և 26 կետեր): Ավելին, արգելքները կիրառվել էին Ցույցերի և երթերի մասին օրենքում սահմանված դրույթներին համապատասխան: Հետևաբար՝ կարելի է համարել, որ դրանք նախատեսված են եղել օրենքով (տես վերոհիշյալ *Stankov and the United Macedonian Organisation Ilinden* գործը, 81 և 82 կետեր): Քանի որ դիմողները կասկածի տակ էին դնում իշխանությունների եզրակացությունն առ այն, որ հասարակական կարգին վտանգ է սպառնացել, այդ հարցը պետք է քննության առնվի հետևյալ հարցի համատեքստում. արդյո՞ք դիմողների հավաքների իրավունքի սահմանափակումները հետապնդել են իրավաչափ նպատակ

և անհրաժեշտ են եղել ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս վերոհիշյալ *Stankov and the United Macedonian Organisation Ilinden* գործը, կետ 82՝ վերջում):

63. Սահմանափակումների նպատակի օրինաչափության և անհրաժեշտության կապակցությամբ Դատարանը պետք է մանրամասն ուսումնասիրի իշխանությունների հիմնավորումները: Այդ առնչությամբ Դատարանը նշում է, որ քաղաքապետի երկու արգելքների դեպքում էլ հպանցիկ հղում է կատարվել հասարակական կարգին սպառնացող վտանգին՝ առանց նշելու մասն ենթադրության հիմքերը և առանց մանրամասներ ներկայացնելու (տե՛ս վերը՝ 13 և 16 կետեր): Ուստի, եթե անգամ ենթադրվի, որ հետապնդած իրավաչափ նպատակները հասարակական անվտանգությունն է և անկարգությունների կանխումը, ապա դժվար է եզրակացնել, որ իշխանությունները պատշաճորեն և բավարար չափով պատճառաբանել են հանրահավաքների արգելումը և հիմնավորել իրենց ենթադրությունն առ այն, որ հասարակական կարգին վտանգ է սպառնում, և որ արգելքներն անհրաժեշտ են եղել ժողովրդավարական հասարակությունում: Հարկ է նշել նաև, որ արգելքների կիրառումն արդարացնելու համար Կառավարությունն իր առարկություններում կոնկրետ պատճառաբանություն չի ներկայացրել, այլ պարզապես հայտարարել է, որ իշխանությունները գործել են ներպետական օրենսդրությանը համապատասխան, և որ իրենց գործողությունները կամայական չեն եղել (տե՛ս վերը՝ կետ 54):

64. Եթե անգամ ողջամիտ էին իշխանությունների կասկածներն այն մասին, որ ՄՄԿ Իլինդեն - ՊԻՐԻՆ-ի (որը հետագայում հակասահմանադրական է ճանաչվել. տե՛ս վերը՝ կետ 11) առաջնորդներից ոմանք կամ անդամների որոշակի խմբեր անջատողական կողմնորոշումներ ունեին և հետապնդում էին այնպիսի քաղաքական նպատակներ,

ինչպիսիք են Պիրին Մակեդոնիա մարզի ինքնավարությունը կամ անգամ Բուլղարիայից անկախացումը, հետևաբար կարելի էր ակնկալել, որ ծրագրված հանրահավաքների ընթացքում մասնակիցներից ոմանք կարող էին անջատողական կոչեր տարածել, սպա դեպքերի նման ընթացքի հավանականությունն ինքնին չէր կարող արդարացնել միջոցատումներն արգելումը (տե՛ս վերը նշված *Stankov and the United Macedonian Organisation Ilinden* գործը, կետ 96):

65. Հետևաբար՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

66. Դիմողները Կոնվենցիայի 13-րդ հոդվածի հիման վրա բողոքել են, որ դատարանները մերժել են ըստ էության քննել երկրորդ արգելքի դեմ ներկայացված բողոքը:

67. 13-րդ հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, եթե նույնիսկ խախտումը կատարվել է ի պաշտոնե գործող անձանց կողմից:»:

#### A. Կողմերի դիրքորոշումները

68. Կառավարությունը հայտնել է, որ Յուլյցերի և երթերի մասին օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է հանրային միջոցառումները քաղաքապետի կողմից արգելելու

արդյունքում խախտված իրավունքները վերականգնելու բավարար կառուցակարգ: Այն հնարավորություն է տալիս վարչական բողոք ներկայացնել, այնուհետև ակնկալել բողոքի դատական վերանայում համապատասխան շրջանային դատարանի կողմից: Կառավարությունն ընդունել է, որ այդ օրենքն ամբողջությամբ չի համապատասխանել 1991թ. Սահմանադրության ընդունմամբ տեղական իշխանությունների կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններին, սակայն, ընդհանուր առմամբ, այն ժողովրդավարական իրավական ակտ էր, որն արդյունավետ երաշխիքներ էր տրամադրում խաղաղ հավաքների իրավունքի սահմանափակումներից պաշտպանվելու համար, և որ այդ օրենքը կիրառելիս իշխանությունները հաշվի են առել օրենքում տեղ գտած բոլոր անցումային դրույթները:

69. Դիմողները պնդել են, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի վրա հիմնված իրենց բողոքի կապակցությամբ իրենք արդյունավետ պաշտպանության միջոցներ չեն ունեցել:

## **B. Դատարանի գնահատականը**

70. Դատարանը վերստին հաստատում է, որ 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական պաշտպանության միջոցների առկայությունն այնպիսի բողոքների վերաբերյալ գործերով, որոնք կարող են Կոնվենցիայի իմաստով վիճարկելի համարվել: Պաշտպանության նման միջոցը պետք է իրավասու ներպետական իշխանություններին հնարավորություն ընձեռի թե՛ քննություն իրականացնել Կոնվենցիայի խախտման վերաբերյալ բողոքներով և թե՛ համապատասխան օգնություն տրամադրել, թեև Պայմանավորվող պետություններն օժտված են գործողությունների որոշակի ազատությամբ նման դեպքերում իրենց պարտականությունները կատարելու ձևի ընտրության

հարցում: 13-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի Պատասխանող պետության իշխանության մարմինների գործողություններով կամ թողտվությամբ (տե՛ս *Hasan and Chaush v. Bulgaria* [Մեծ պալատ], թիվ 30985/96, կետ 96, ECHR 2000-XI):

71. Սույն գործով Դատարանը եզրակացնում է, որ դիմողների՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածով նախատեսված իրավունքները խախտվել են (տե՛ս վերը՝ կետ 65): Ուստի Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով՝ նրանք վիճարկելի պահանջ են ունեցել և այդ պատճառով իրավունք ունեին ունենալու 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող պաշտպանության միջոցներ:

72. Ինչպես նշվել է վերը՝ ներպետական օրենսդրության մեջ չկա դրույթ, որը սահմաներ, որ քաղաքապետի արգելքները ենթակա էին բողոքարկման Մոնիցիյալ խորհրդին (տե՛ս վերը՝ 47-49 կետեր): Գոյություն չունեցող մարմնի՝ Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտե բողոքարկելու հնարավորությունը՝ սահմանված Ցույցերի և երթերի մասին օրենքի 12(4) հոդվածով (տե՛ս վերը՝ կետ 26), ևս չի հանդիսանում պաշտպանության արդյունավետ միջոց:

73. Ցույցերի և երթերի մասին օրենքի 12(6) հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցը՝ իրավասու շրջանային դատարանի կողմից քաղաքապետի արգելող որոշման դատական վերանայման հնարավորությունը (տե՛ս վերը՝ կետ 26) սկզբունքորեն կարող էր արդյունավետ գործել: Այնուհանդերձ, սույն գործի պարագայում այդ միջոցն արդյունավետ չի եղել այն պատճառով, որ Սոֆիայի շրջանային և քաղաքային դատարանները որոշել էին, որ դատական իշխանությունները քաղաքապետի արգելող

որոշումների դեմ բերված բողոքների քննության իրավասություն կունենային միայն Ժողովրդական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից բողոքը մերժելու դեպքում (տե՛ս վերը՝ 18 և 21 կետեր): Ճիշտ է, Գերագույն վճռաբեկ դատարանն ի վերջո հայտարարել է, որ չի կիսում այդ կարծիքը, բայցևայնպես, այն մերժել է Սոֆիայի քաղաքային դատարանի որոշման դեմ բերված բողոքը՝ այն հիմքով, որ հարցը վիճելի էր եղել (տե՛ս վերը՝ կետ 23):

74. Ավելին, Գերագույն վճռաբեկ դատարանի որոշումը կայացվել էր ծրագրված միջոցառման անցկացման նախատեսված օրվանից մոտավորապես չորսուկես տարի անց (տե՛ս վերը՝ 19-23 կետեր): Նման իրավիճակի հանդիպելով *Stankov and the United Macedonian Organisation Ilinden* (վերը հիշատակված՝ Հանձնաժողովի 1998թ. հունիսի 29-ի չիրապարակված որոշում) գործով՝ նախկին Հանձնաժողովը վճռել էր, որ «անկասկած, եթե դիմողները փորձեին [բողոք ներկայացնել շրջանային դատարանի կողմից քաղաքապետի արգելքի դեմ ներկայացված բողոքի քննությունը մերժելու վերաբերյալ], դատավարությունը կտևեր առնվազն մի քանի ամիս, իսկ հնարավոր նպաստավոր որոշումը կկայացվեր ծրագրված ցույցի կամ հանրահավաքի նախատեսված օրվանից շատ ավելի ուշ»: Նմանապես, նկատի ունենալով, որ հանրահավաքների անցկացման ժամանակն էական էր կազմակերպիչների և մասնակիցների համար (տե՛ս վերը՝ 12 և 15 կետեր, ինչպես նաև վերոհիշյալ *Stankov and the United Macedonian Organisation Ilinden* գործը, կետ 109), ինչպես նաև այն, որ կազմակերպիչները ժամանակին տեղեկացրել էին իրավասու իշխանություններին, Դատարանը գտնում է, որ տվյալ հանգամանքներում պաշտպանության արդյունավետ միջոցի գաղափարը պետք է հնարավորություն ընձեռի որոշման կայացմանը հասնել մինչև ծրագրված միջոցառումների օրը (տե՛ս, վերապահումներով,

*Cisse v. France*, կետ 32, թիվ 51346/99, 9 ապրիլի 2002թ.): Նման մտահոգությունների վկայություն է նաև Յուլյեթի և երթերի մասին օրենքի 12(3), (4) և (6) հոդվածների շարադրանքը, որոնք շատ սեղմ ժամկետներ են սահմանում համապատասխան միջոցառումն արգելելու հարցով կամ նման արգելքների դեմ ներկայացված բողոքներով որոշումներ կայացնելու համար (տե՛ս վերը՝ կետ 26): Այնուամենայնիվ, սույն գործով դա տեղի չէր ունեցել:

75. Ինչպես երևում է՝ պաշտպանության այլ միջոցներ առկա չէին: Մասնավորապես, թեև Վարչական վարույթի մասին 1979թ. օրենքի 27(3) հոդվածը թույլ է տալիս քաղաքապետի որոշումները բողոքարկել նահանգապետերին (տե՛ս վերը՝ կետ 29), Կառավարությունն իր առարկություններում այդ դրույթը չի վկայակոչել և չի ներկայացրել օրինակներ, որ այդ միջոցը կարող է արդյունավետորեն օգտագործվել հանրային միջոցառումներն արգելելու առնչությամբ (վերապահումներով, տե՛ս վերը հիշատակված *Stankov and the United Macedonian Organisation Ilinden*-ի գործը, Հանձնաժողովի 1998թ. հունիսի 29-ի չիրապարակված որոշումը):

76. Հետևաբար՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

#### IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

77. Դիմողները պնդել են, որ տվյալ գործով իշխանությունների դրսևորած վարքագիծը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրենք մակեդոնացի են: Նրանք հիմնվել են Կոնվենցիայի 14-րդ հոդվածի վրա, որը սահմանում է.

## Հոդված 14.

«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

78. Դատարանը նշում է, որ այս գանգատը վերաբերում է նույն փաստերին, ինչ 11-րդ և 13-րդ հոդվածների պարագայում: Հաշվի առնելով 65-րդ և 76-րդ կետերում շարադրված եզրահանգումները՝ Դատարանը չի գտնում, որ պետք է քննության առնի այն (տե՛ս *Sidiropoulos and Others v. Greece*, 1998թ. հուլիսի 10-ի վճիռը, կետ 52, *Reports* 1998-IV, էջ 1619):

## V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

79. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

## **A. Վնասը**

80. Գործում մնացած երեք դիմողները (տե՛ս վերը՝ 8, 31 և 32 կետեր) պահանջել են յուրաքանչյուրի համար 4000 եվրո՝ որպես սույն գործով հաստատված խախտումների արդյունքում կրած ոչ նյութական վնասի փոխհատուցում: Նրանք նշել են, որ թեև սույն գործով հաստատված խախտումներն անմիջական ազդեցություն չեն ունեցել իրենց առօրյա կյանքի վրա, այդուհանդերձ, դրանք հիմնավորում են իրենց զգալի չափով ոչ նյութական վնասի փոխհատուցում տրամադրելու անհրաժեշտությունը, քանի որ այդ խախտումներն ի ցույց են դնում Բուլղարիայի՝ մակեդոնական ծագում ունեցող քաղաքացիների նկատմամբ Բուլղարիայի իշխանությունների համընդհանուր վերաբերմունքը, ինչի մասին վկայում են Դատարանի կողմից քննված մի շարք այլ գործեր:

81. Կառավարությունն այս առնչությամբ մեկնաբանություններ չի ներկայացրել:

82. Դատարանն ընդունում է, որ հավաքների ազատության իրավունքի խախտման և այդ կապակցությամբ արդյունավետ պաշտպանության միջոցների բացակայության հետևանքով դիմողներին պատճառվել է ոչ նյութական վնաս: Դատարանը համարում է, որ այդ վնասը, այնուամենայնիվ, բավարար չափով փոխհատուցվել է Կոնվենցիայի 11-րդ և 13-րդ հոդվածների խախտումները ճանաչելով:

## **B. Ծախքեր և ծախսեր**

83. Դիմողները պահանջել են 3 000 եվրո որպես կատարված ծախքերի ու ծախսերի փոխհատուցում, որից 600 եվրոն՝ ներպետական վարույթի ընթացքում կատարված

աշխատանքի, իսկ 2 400 եվրոն՝ Դատարանում իրենց ներկայացուցչությունն ապահովելու համար:

84. Կառավարությունն այս առնչությամբ մեկնաբանություններ չի ներկայացրել:

85. Հաշվի առնելով վերը նշված բոլոր գործոնները՝ Դատարանը բոլոր դիմողների համար՝ միասին, սահմանում է 2 000 եվրո փոխհատուցում՝ հավելած այդ գումարից զանձանան ենթակա հարկային պարտավորությունների գումարը:

### **C. Տուգանային տոկոսներ**

86. Դատարանը նպատակահարմար է համարում, որպեսզի տուգանային տոկոսը զանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքի հիման վրա՝ հավելած երեք տոկոս:

### **ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ**

1. միաձայն *որոշում է* գործը, պրն Դիմչո Դիմիտրով Խրիստովի մասով, հանել քննության ենթակա գործերի ցանկից,

2. միաձայն *մերժում է* պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու առնչությամբ Կառավարության առարկությունները,

3. ձայների՝ հինգը մեկի հարաբերակցությամբ *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում,

4. միաձայն *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում,

5. միաձայն *վճռում է*, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ենթադրյալ խախտման վերաբերյալ քննությունն անհրաժեշտ չէ,

6. միաձայն *վճռում է*, որ խախտումների ճանաչումն ինքնին հանդիսանում է դիմողների կրած ոչ նյութական վնասների բավարար փոխհատուցում,

7. միաձայն *վճռում է*.

(a) որ Պատասխանող պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, վճիռն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմողներին պետք է վճարի 2 000 (երկու հազար) եվրոյին համարժեք բուլղարական լև՝ որպես ծախսերի և ծախսերի փոխհատուցում, վճարման օրվա փոխարժեքով՝ հավելած դրա հետ կապված բոլոր հարկային պարտավորությունների գումարը.

(b) որ վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետը լրանալուց հետո կատարելու դեպքում այդ ժամանակահատվածի համար պետք է վճարվի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքին՝ հավելած երեք տոկոս,

8. *միաձայն մերժում է* արդարացի փոխհատուցման վերաբերյալ դիմողի մնացյալ պահանջները:

Կատարվել է անգլերենով և գրավոր հրապարակվել 2005թ. նոյեմբերի 24-ին՝ Գատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն: